

խոշորագույն հուշարձանի համալիրը: Այդ ուսումնասիրությունը կատարվում է ՀՍՀՄ Մինիստրեն-րի խորհրդի որոշմամբ: Գլխավոր միջնաբերդի և դամբարանների պեղումները արժեքավոր նյութեր են տալիս 11—1 դդ. Արևմտյան Ասիայի լեռնային ժողովուրդների սոցիալական կառույցների վերաբերյալ: Արշավախմբերի պեղումները շարունակվում են: Պեղված արժեքավոր նյութերը հանձնվում են Հայաստանի և Երևանի պատմության թանգարաններին:

Հայագիտական հետազոտությունների կենտրոնի կազմի մեջ է մտնում նաև տեղանունների բուսաբանագրական խումբը, որը պատրաստում է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բուսաբանություն» Այդ արժեքավոր գործն ընդգրկելու է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը եղած աշխարհագրական բոլոր անունները (նահանգներ, գավառներ, շրջաններ, թագավորություններ, իշխանություններ, բաղաբներ, գյուղեր, բերդեր, վանքեր, դաշտավայրեր, լեռնագագաթներ, գետեր և այլ աշխարհագրական միավորներ)՝ լեզվագիտական, աշխարհագրական, պատմական համապատասխան բացատրություններով և տարբերակներով հանդերձ: Բառարանի կազմողներն են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Բ. Հակոբյանը (գեկավար), պրոֆ. Ստ. Մելիք-Բախչյանը և դոցենտ Հ. Բալասանյանը:

Հայագիտական հետազոտությունների կենտրոնը կազմակերպում է նաև համամիութենական ու միջազգային գիտաժողովներ: Առաջին գիտաժողովը կազմակերպվել է 1979 թ. ՍՍՀՄ ԳԱ ուսմ գրականության ինստիտուտի (Պուշկինյան տուն) ուսմ հին գրականության բաժանմունքի:

ՀՍՀՄ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի և Մաշտոցի անվան Մատենադարանի հետ համատեղ Այն նվիրված էր Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակին:

Հայագիտական կենտրոնում իրենց գիտելիքներն են խորացրել ինչպես Միություն, այնպես էլ արտասահմանյան երկրների երիտասարդ հայագետներ: Կենտրոնի ՍՍՀՄ ժողովուրդների գրական կապերի բաժինը շնորհակալ աշխատանք է կատարում եղբայրական հանրագիտությունների համալսարանների հետ ուսանողների փոխանակման միջոցով թարգմանիչներ պատրաստելու ուղղությամբ: Երեսնի համալսարանի ուսանողները իրենց կրթությունը շարունակում են Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Ռիգայի, Վիլնյուսի, Տարսուի, Փրիլիբիի համալսարաններում՝ սովորելով ռուսերեն, ուկրաիներեն, լիտվերեն, լատիշերեն, էստոներեն, վրացերեն: Փոխադարձաբար նրանց ուսանողները սովորում են Երևանի համալսարանում՝ հատուկ ձևերով անցնելով հայոց լեզու և գրականությունը: Իրենց հանրապետություններում նրանք գրական-մշակութային դերժողություններ են ծավալում, թարգմանում են հայ գաղական և ժամանակակից գրողների լավագույն ստեղծագործությունները և առանձին գրքերով հրատարակում իրենց մայրենի լեզուներով: Նրանք ուսումնասիրում են նաև իրենց գրականությունների ու մշակութային կապերը հայ գրականության ու մշակութային հետ և տպագրում գիտական հոդվածներ ու մենագրություններ:

Վ. Ս. ՄԱՂԱՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԵՐԿՈՒ ԽԱՂԻԿՆԵՐ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՁԵՌԱԳՐՈՒՄ

ՍՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի գրադարանի ձեռագրային ֆոնդում պահվում է E—12 պարսկերեն ձեռագիր (նախկին շիֆրը՝ Nov—1419), որը մի հատընտի է, ուր հավաքված են մեծ ժառանգ պարսկական դասական պոեզիայի նրժուշներ: Դրանց հետ միաժամանակ հանդիպում են արաբական, հնդկական, աֆղանական, քրդական և հայկական պարսկատառ բանաստեղծություններ ու ժողովրդական խաղիկներ: Ձեռագիրը բաղկացած է 460 թերթից (920 էջ): Յուրաքանչյուր էջի մակերեսն է 74×45 սմ, ձևապիր մասը կազմում է 56×38 սմ: Տեքստերը դրված են սև տուշով և շոշանակված կարմիր թանաքով: Ժողովածուն ունի հարյուր գունավոր մանրանկար: Պետք է ենթադրել, որ ձեռագիրը

գրված է նկարազարդված է իրանում¹: Գրիչը եղել է ոմն Իբն-Մոհամմադ Ռեզա-Մոհամմադ Քազեմ (էջ 134, 197 և 237): Նրա վկայությամբ հատընտիրը գրվել է յոթ տարվա ընթացքում

1 Ձեռագիր հիշատակարանում գրիչը հաղորդում է հետևյալը. «1193 թվականի Ռաշաթ-յ-սորաջջաբ ամսի 12-ին (1778 թ.), այն ժամանակ, երբ Ֆարս նահանգի կողմից ահավոր լուրեր էին հասնում, և ամբողջ ժողովուրդը սարսափի ու տագնապի մեջ էր, այդ օրերին գրի էմ առել...» (էջ 124): Եթե նկատի ունենանք իրված թվականը և գրիչի վերահիշյալ վկայությունը, ապա պետք է եղրակացնել, որ ձեռագիրը գրվել է իրանում այդ ժամանակ իշխող Ձենդիների և նոր իշխանության գլուխ անցնող Կաշարների միջև: 1779 թ. ծավալված արյունահեղ

(1778—1784/5 թթ.), «Իրեն սիրելի մեկի խնդրանքով» և արտագրելու և ձեռագրել է իր տրամադրության տակ եղած տարբեր ձեռագրերից (էջ 116, 134): Ձեռագրումից երևում է, որ գրիչը եղել է բանիմաց և գրականությանը ծանոթ անձնավորություն, բանի որ ձեռքի տակ եղած նյութը օգտագործելիս, բնագրից արտագրելու ժամանակ, ինչպես նշում է ինքը, կատարել է ուղղումներ, իսկ աղավաղված մասերը, հետագայում լրացնելու նպատակով, թողել է բաց (էջ 152, 190):

Ժողովածուն ընդգրկում է հատվածներ մոտավորապես 250 բանաստեղծների ստեղծագործություններից (Ֆիրդուսի, Նիզամի, Սաադի, Հաֆեզ, Խառանի, Բաբա-Բաշեր Օրյան, Խալամ), ինչպես նաև նմուշներ XVII—XVIII դդ. բանաստեղծների Վահշի, Թալեր-Ամելի, Սահարի, Թարզի Աֆարի, Սամեթի և ուրիշների գործերից: Կան նաև այնպիսի չափածոներ, որոնց հեղինակներն անհայտ լինելու պատճառով գրիչը տեքստի հենց սկզբում գրում է՝ «լաադրի» (անհայտ):

Ստորև բերված երկու հայկական երգերը, որոնք իրականում ժողովրդական խաղիկներ են, տեղավորված են 195-րդ էջում, «Հայերեն լեզվով մի քանի բանաստեղծություն» ընդհանուր վերնագրի տակ: Առաջին բանաստեղծությունը, ավարտվելուց հետո երկրորդը վերնագրված է՝ «Էլյան բեգաբանն արամանն» (կրկին հայերեն լեզվով):

Քանի որ պարսկերենի այբուբենը չի կարող արտահայտել հայերենի բոլոր հնչյունները, ուստի հայերեն բանաստեղծություններն ունեն բավական աղավաղումներ: Շատ տեղեր առանձին բառեր միացված են իրար կամ միևնույն բառը մասնատված և միացված է հաջորդ բառին: Օրինակ՝ «վարթն նարասին» (վարթն երեսին), «մեսրուն» (մի սիրուն) և այլն: Հնչյունական համարժեքների տեսակետից էլ գրիչը որևէ օրինաչափության չի հետևել: Օրինակ, հայերեն զ և դ տառերի համահնչյունները պարսկերենում կան, սակայն անխտիր փոխվել են «է»-ի: Այս ումենը ջույց են տալիս, որ գրիչը հայերենին ծանոթ չի եղել: Նրան կամ մեկը թելադրել է (հավանաբար պարսկալեզու հայ) կամ էլ որևէ այլ ձեռագրից մեխանիկորեն արտագրել է:

Ստորև տալիս ենք պարսկատառ տեքստի լուսանկարը, նրա հայերեն տառադարձումը, ապա՝ հայերեն վերծանված տեքստը (երկրորդ բանաստեղծության առաջին երկու տողերը բնագրում տրված են մեկ տողով):

Կոմիների տարիներին: Գրիչը քաղաքի անունը չի նշում: Ծնթագրում ենք, որ նա ապրել և աշխատել է Սպահանում:

Շեր-Է-Հանդ բեգաբանն արամանն

Քեթրաթուր վազեսի
Մեսերուն ախչեք շառեսի
Քենասի դեսա քենասն
Վարթն նարասին փրասն
Բեվով քենին դերասն
Ֆլանի միթան նեսթասն

Էլյան բեգաբանն արամանն

Խաշով խաշով ջանես
Հոգիդ ու մարջանես
ես քես քաղաքեմ
քենավ շաղաղաքեմ
փեղեր փեղեր մարթիրներ
ջան խաղասոր դադիրներ
Դոխու խենգոր ախչեքեսի

Վերծանվածը հետևյալ հայկական ժողովրդական խաղիկներն են.

1

Կլտրակտոֆ վազեցի,
Մե սիրուն աղջիկ ճարեցի.
Գնացի տեսա քնած է,
Վարդն երեսին փռած է,
Քովր գինին դրած է,
Ֆլանը մոտը նստած է:

Կրկին հայերեն լեզվով

2

Խաշով-խաշով ջանես,
Հոգիս մարջանես,
ես քեզ կաղաչեմ,
Գինով շաղաղեմ,
Փետե, փետե մարդիկներ,
Ջան խաղասոր տղերներ,
Դեղձ ու խնձոր աղջիկներ:

Հայտնի է, որ Շահ-Աբասի բռնազաղթի ժամանակ հայ գաղթականներն իրենց հետ բովականին թվով ձեռագրեր են բերել և նվիրել Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանին (Սպահան): Հետևապես, չի բացառվում, որ ձեռագրում բերելով Արարատյան դաշտի ժողովրդական խաղիկները, որոնք ավելի շուտ «ջանգլուկներ» են, գրիչը օգտվել է հայկական տաղիկների որևէ ժողովածուից (հայի օգնությամբ):



ինչ վերաբերում է առաջին պարսկատառ խաղիկին, մենք դրա տարբերակը գտանք «Հայ աղագրություն և բանահյուսություն» աշխատության մեջ, բանահավաք Ա. Նաղարյանի կողմից գրի առնված «Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից» բաժնում տեղ գտած խաղիկներին շարքում: Միայն թե այս տարբերակը բաղկացած է չորս տողից (պարսկատառը 6 տող է), և առաջին տողը սկսվում է ոչ թե «կրտորակտոր վաղեցի», այլ «կտոր-կտոր վարել եմ»: Ստորև բերում ենք այդ խաղիկի տարբերակը.

կտոր-կտոր վարել եմ,
 Մի սիրուն աղջիկ ճարել եմ,
 Տեսա անուշ քնած ա,
 Վարզն էրեսին փռած ա՛:

Երկրորդ պարսկատառ խաղիկի ճշգրիտ կրկինօտինակը կամ որևէ մոտիկ տարբերակ, ինչպես Մ. Արևիզյանի, այնպես էլ Գ. Հովսեփյանի

2 Ա. Ա. Օղաբաշյան. Հայ աղագրություն և բանահյուսություն. Երևան, 1978, էջ 119, խաղ. 48:

և մյուսների մոտ չկա: Սակայն հայ բանահավաքների աշխատություններում կան բազմաթիվ գրի առնված «չանգյուլումներ», որտեղ հանդիպում ենք այնպիսի ժողովրդական բառերի ու արտահայտությունների (փետե-փետե մարդիկ, կամ խոշխոշ աղջիկներ և այլն), որպիսիք զբոսնում ենք նշված պարսկատառ հայերեն խաղիկներում³: Հենց այս ընդհանրությունների ու տարբերակներն էլ ներկայացնում են ժողովրդական բանահյուսության հետաքրքրությունն ու նրանց պատմական աղբյուրը:

Կարծում ենք, որ պարսկերեն ձևադրերում տեղ դատած հայկական ժողովրդական խաղիկների երկու նմուշները ուշագրավ են երևույթ են ուշ շրջանի (1778—1784 թթ.) հայ-պարսկական մշակութային կապերի ու առնչությունների պատմության մեջ:

Հ. Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

3. ՏԵՆՍ Մ. Արևիզյան. Ժողովրդական խաղիկներ. Երևան, 1940, էջ 268, խաղիկ 1116: Գ. Հովսեփյան. Փշռանքներ ժողովրդական բանահյուսությունից. Ռիֆիս, 1892, էջ 72:

ՁԵՌԱԳԻՐԻ ԳՐՎԱԾ ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԲԵՆԵՆՑ ՎԱՆՔՈՒՄ

Հայկական ձեռագրական փոխարի ժառանգություն մեզ Անիում գտված ձեռագրերը փոքր թիվ են կազմում, ուստի նրանցից յուրաքանչյուրը՝ լինի նկարազարդ թե ոչ, ամբողջական, թե մասնատված՝ «տիեզերահասկ Անի մայրաքաղաքի» երբեմնի ծաղկուն մշակույթի մի սրբազան մասունքն է, արժանի ամենամանրամասն ուսումնասիրություն և նման ձեռագրերից է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 5554 Ավետարանը, ընդօրինակված Անիի Բեխենց վանքում¹:

Ձեռագիրը գրված է նուրբ մագաղաթի վրա, 71-նի 278 թերթ (25×18 սմ), երկայուն գրությամբ (սյունակ 7,3×5,3 սմ), գրչությունը՝ բոլորգիր.

1 Ձեռագրացուցակում Ավետարանի գրչության վայր է անվանվում Ջարեհանի ուխտը (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի. Հ. Բ. Երևան, 1970, էջ 132): Սակայն դա ոչ թե ձեռագրի գրչության վայրն է, այլ այն վանքը, որի համար ընդօրինակվել է սույն Ավետարանը: Ձեռագրի խորաններում եղած հիշատակագրությունները թույլ են տալիս ասելու, որ այն գրվել է Անիի Բեխենց վանքում (Ա. Մաթևոսյան. Նշմարներ Անիի գրչության և մանրանդակարչության. — «Բանբեր Մատենադարանի», № 14):

տող՝ 20: Մեղմբ դրոշմագարդ կաշեպատ տախտակ է, աստաղ՝ զարդաշուք գործվածք և կանաչ մետաքս: Ավետարանն ամբողջական է, նրա դեզարվեստական հարդարանքն են կազմում ինը խորանները, համապատասխան էջերում նկարված չորս անվանաթերթերի կիսախորանները, ինչպես նաև մեծաթիվ լուսանցաղարդերը: Ձեռագրում ավետարանիչների և տերունական պատկերներ չկան: Հիշատակարաններից խմբում ենք, որ Ավետարանի ստացող ոմեն Գրիգորն է, որն էլ այն նվիրել է Ջարեհանի ուխտին: «Գրիգոր ստացող սուրբ Ավետարանիս և ամուսին նորին և որդիս նոցին լիշխաքի ի Քրիստոս: Ընդ նոսին և զՍիմեոն կրախնայլոր պատճառ գործոյս և դառաջնորդը սուրբ ուխտին Ջարխիշանի զեղիսէ հայր և զՎարդան փակակալ և զնաշատուր գործակից, զՍտեփանոս և զՂուկաս, զՎարդա միայնատր և զայլ համարեն միաբանք: Սուրբ Նշանիս, որում սուրբ Ավետարանս է խայրի և քնծալ աւանդեալ ի վերագրելոյս»²: Ձեռագրի էջերում կան նաև այլ փոքր հիշատակագրություններ (էջ 42բ, 132ա), որ հիշվում է Գրիգորի կողակից Ծահումը:

2 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 5554, էջ 278ա: